



ՈՐՈՇՈՒՄ N 17_Լ

18 հունվարի 2022 թվական

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ղեկավարին 2022 թվականի ծախսերը կատարել՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունվար «18»

Երևան